ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2020/128, 22.12.2020թ.

Բողոք բերող անձ՝ «Մարգ Ֆարմացիա» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԻՀԱԿ-ՀՄԱԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15» հրատապ մեկ անձ

Գնման առարկան՝ էնդոսկոպ համակարգի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել Պատվիրատուին չեղյալ հայտարարել «ԻՀԱԿ-ՀՄԱԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15» ծածկագրով գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

Հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փող., 1

Բողոքը ներկայացնող անձ՝ « Մարգ Ֆարմացիա» ՍՊ ընկերություն

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռուբինյանց 23/1 50

Պետական գրանցման համար՝ 282.020.02485

Գրանցման ամսաթիվը՝ 14.04.1997թ.

ՀՎՀՀ՝ 00842845

Հեռ՝ 0037493488152

Էլ.փոստ՝ marg_pharmacia@yahoo.com

Պատվիրատու՝ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ

Ընթացակարգի ծածկագիր՝ ԻՀԱԿ-ՀՄԱԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15

Գնման առարկա՝ բժշկական սարքավորումներ

Բողոքի առարկա

Սույն թվականի դեկտեմբերի 17-ին ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով հրապարակվել է ԻՀԱԿ-ՀՄԱԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15 ծածկագրով գնանշման հարցման հրավեր:

Հրավերով սահմանվում է, որ այն կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի «ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ պատվիրատու) կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետ՝ մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, ընտրված մասնակցին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել համակարգում գրանցված բոլոր անձիք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Ըստ ՀՀ Կառավարության 526-Ն որոշման՝

16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: **Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է:** Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

17. Գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Սրանից բացի, նույն որոշմամբ ամրագրված է, որ

20. Գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) պատասխանատու ստորաբաժանում, և

2) գնումները համակարգող:

Ինչպես ամրագրված է նույն որոշման մեկ այլ կետով,

11. Պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը.

Պատվիրատուի 2020թ. Գնումների պլանի հերթական ու ամենավերջին փոփոխությունը հրապարակվել է սույն թվականի դեկտեմբերի 17-ին, ժ. 19:22:32-ին (կից՝ gnumner.am կայքի համապատասխան էջը), իսկ մրցույթը հրապարակվել է նույն օրը, սակայն 19 ժամ ավելի շուտ, այսինքն՝ 17.12.2020թ. ժ. 00:24-ին (կից՝ armeps.am կայքի համապատասխան էջը):

Այսինքն, ստացվում է, որ գնման պահանջի ծագման օրվանը հաջորդող օրը, ամենաշուտը, կարող է որոշվել պատասխանատու ստորաբաժանումը, որը պիտի պատրաստի գնման հայտը, այնուհետև միայն կարող է ձևավորվել գնահատող հանձնաժողովը և հրապարակվել մրցույթը: Այնինչ, գնանշման հարցման մասին հայտարարության մեջ նշվում է, որ «հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի «դեկտեմբերի» «16» « 1» որոշմամբ», այսինքն, փաստացի, գնահատող հանձնաժողովը ձևավորվել և նույնիսկ հասցրել է գնման առարկայի մրցույթի հրավերի ու հայտարարության վերաբերյալ նիստ անցկացնել մինչև գնման առարկայի՝ գնումների պլանում ներառված լինելու փոփոխությունը հրապարակելը: Սա ուղղակիորեն հակասում է գնման գործընթացի կազմակերպման իրավական դրույթներին:

Վերոնշյալ իրավական հիմքերից բացի, հրավերում կա ևս մեկ սխալ, այն է՝ ընտրված ընթացակարգը, ըստ armeps.am-ի և ըստ գնումների պլանի «հրատապ մեկ անձից գնում» ընթացակարգն է, այն դեպքում, երբ ամբողջ հրավերի տեքստը կազմված է որպես «գնանշման

հարցում», սակայն պահպանված չեն գնանշման հարցման հրավերի համար օրենքով սահմանված ժամկետները (հայտերի բացում և այլն): Այսպիսով, հրավերի տեքստից անհասկանալի է, ի վերջո որ ընթացակարգով է անցկացվելու մրցույթը:

Բողոքի պահանջ

Հաշվի առնելով վերոգրյալը և ներկայացված իրավական հիմքերն ու ապացույցները, պահանջում ենք պարտավորեցնել Պատվիրատուին, չեղյալ հայտարարել **ԻՀԱԿ-ՀՄԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15** գնանշման հարցման հրավերը:

Կից ներկայացվում են՝

1. **ԻՀԱԿ-ՀՄԱՊՁԲ-ԳԼԲՍ-20/15 գնանշման հարցման հրավերը**
2. **Պատվիրատուի գնումների պլանի վերջին հրապարակված փոփոխությունը**
3. **Armeps.am և gnumner.am կայքերից նշված քաղվածքները**
4. **«Մարգ Ֆարմացիա» ՍՊ ընկերության պետ.ռեգիստրի վկայականի պատճենը**
5. **Բողոքարկման վճարը կատարած լինելը հաստատող վճարման հանձնարարականը**

«Մարգ Ֆարմացիա» ՍՊ ընկերության տնօրեն _____ Վ. Վարդանյան

18.12.2020թ.